Ltn
1415

1998

ՀԱԻԱՏԱՊԱՏՈՒՄ

ԱՑՆ Է

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՈՅ

Ի ՊԷՏՍ

ՀԱՅԿԱԶՆԵՒԱՅ ՄԸՆԿԸՆՑ

ՎԵՑՏԵՐՈՐԴ ՏԻՊ

(Ըստ [illegible] տպագրութեան անփոփոխ)

Ի ՄՈՍԿՈՒԸ
[illegible]ՈՒԹԻՒՆ ԶԱՐՄԱՑՐԱՑ ՄՍԵՐԵԱՆՑ
1879.

Լեռ
1415

ԿԱԺԱՌԵԼԻ ԳՐԵԱՆՔ

1· ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Մանր Ուսմունք Քրիստոնէական Հաւատոյ (Краткій Катехизисъ). Մ՝ Երրայ Մ՝ Մ՝ Բ՝ Էանց· Գին իւրաքանչիւրոյ 25 կ· արծ·
Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 20 կոպ·
„ „ „ 50 „ „ 15 „

2· ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Սրբազան Պատմութեան Աւետարանի (Краткая Священная Исторія Новаго Завѣта). Նոյն հեղին· Գին իւրաքանչիւրոյ 40 կ· արծ·
Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 35 կոպ·
„ „ „ 50 „ „ 30 „

3· ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Ազգային Եկեղեցական Պատմութեան (Краткая Исторія Армянской Церкви). Նոյն հեղին· Գին իւրաքանչիւրոյ 20 կ· արծ·
Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 15 կոպ·
„ „ „ 50 „ „ 10 „

4· ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական Հաւատոյ, ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց (Пространный Катехизисъ). Նոյն հեղին· Գին իւրաքանչիւրոյ 75 կոպ· արծ·
Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 60 կոպ·
„ „ „ 50 „ „ 50 „

„Եւ լոյս յաշխարհ եկի, զի ամենայն որ հաւատայ յիս, Ի խաւարի մի մնասցէ։"

Յովհ. ԺԲ. 46։

ՀԱԻԱՏԱՊԱՏՈՒՄ

ԱՅՆ Է

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՈՅ

Ի ՊԷՏՍ

ՀԱՅԿԱԶՆԵՐԱՅ ՄԸՆԿԵՐՑ

—

ԳՐԵԼ

Ի ՄՍԵՐԱՅ ՄԱԳԻՍՏՐՈՍԷ

Նախորդ կրօնասոյց վարժապետի Լազարեան ճեմարանի ուսուցչաց։

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԻՊ

(Ըստ հինգերորդ տպագրութեան անփոփոխ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Գրաբար ձեռագրերի սեկտոր
Մատենադարան
Գ. Մ. Ա. Մաշտոցի անվան

Ի ՄՈՍԿՈՒԸ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐՄԱՑՐԱՑ ՄՍԵՐԵԱՆՑ

1879.

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 18 Февраля 1878 года.

Tous droits réservés.

Հ. 1418

4 1415-60

Москва. Типогр. А. Гатцука, на Кузнец. мосту, д. Торлецкаго.

***

Մանուկց ուսմանց որ ասաբս գոն
Մի՛ա դիր, մանուկ, լե՛ր և ըզգօն.
Սիրոյ ածմամբ և Հաւատոյ՝
Տեառն Աստուծոյ պաշտօն մատո։
Երկեղած միտք 'ի քեզ թէ կայ,
Զոր ուսանիսդ՝ անդուլ խոկա։
Բաբունապետն Հանուրց Յիսուս
Զմանկան օրհնեալ ըզդեռաբոյս,
„Ատդպիսեանց է, ասէ, արժան
Յերկնից հանդչել 'ի յօթևան“։
Յուսափափագ փութա և դու
Կրցորդ նոցուն լինել պարու։
Է՛ քեզ արդ ժամ անմեղ աւուրբ
Հրեշտականալ 'ի վարս 'ի սուրբ։

„Խաղում են մեզ բանք, և դժուարապատում 'ի մեկնել... Պիտոյ է ձեզ ուսանել՝ թէ զինչ են նշանագիրք սկզբան (Մանր Ռ-սմուռնոյ կամ Համառօտ Գէոդեէ+) բանից Աստուծոյ. և եղերուք կարօտ կաթին, և ոչ հաստատուն կերակրոյ։ Զի ամենայն որ կաթնկեր է, տգէտ է բանին արդարութեան. քանզի տղայ է։ Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր. որոց՝ վասն 'ի չափսն հասանելոյ՝ ճաշակելիքն կիրթ են ընտրութեան բարւոյ և չարի“։

Եբր. Ե. 11—14։

ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ

ԱՅՆ Է

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ

---

1. Ի՞նչ ես դու։
2. Քրիստոնեայ։
3. Ի՞նչ նշանակէ Քրիստոնէայ բառդ։
4. Նշանակէ՝ Քրիստոսի հետեւող կամ հաւատացող։
5. Ո՞յք նախ դրին քոյր անունը՝ Քրիստոսի հաւատացողաց։
6. Առաքեալք դրին Անտիոք քաղաքումը՝ յետ Քրիստոսի համբարձման*։
7. Ի՞նչ ուսուցանէ Քրիստոնէական Վարդապետութիւնն։
8. Ուսուցանէ պաշտել զԱստուած՝ Ճշմարիտ Հաւատով, հաստատուն Յուսով, և անկեղծ Սիրով։

---

* Գործ. ԺԱ. 20։

ԳԼ. Ը

ՀԱՒԱՏՔ

Հ. Քրիստոնէական հաւատալիքն որ գրուածոյ մէջ պարունակեալ են համառօտիւ։

Պ. Հանդանակի մէջ, որ է Հաւատամքն։

Հ. Ասա զՀաւատամքը։

Պ. „Հաւատամք 'ի մի Աստուած՝ Հայր ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի, երևելեաց և անտեսանելեաց։

„Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր։ Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ և ոչ արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր։ որով ամենայն ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի, երևելիք և անտեսանելիք։

„Որ յաղագս մեր մարդկան՝ և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով։ Որով

էառ մարմին, հոգի և միտք, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս՝ և ոչ կարծեօք։

„Չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ։ Երեալ յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ Հօր։

„Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, դատել զկենդանիս և զմեռեալս։ Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

„Հաւատամք և 'ի սուրբ Հոգին յանեղն և 'ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն։ և բնակեցաւ 'ի սուրբսն։

„Հաւատամք և 'ի մի միայն՝ ընդհանրական և առաքելական եկեղեցի։ Ի մի մկրտութիւն։ Յապաշխարութիւն։ Ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց, 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց։ յաքայութիւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս։“

—

„Իսկ որք ասեն, էր երբեմն՝ յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր

սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ. և կամ զսուրբ Հոգին, և թէ փոփոխելի են կամ այլայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի“:

—

„Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն“:

—

Հ. Այդ Հանգանակդ յո՞ր տեղ սահմանեցաւ:
Պ. Նիկիոյ ժողովոյն մէջ:
Հ. Ո՞յք ժողովեցան 'ի Նիկիա:
Պ. Երեք հարիւր տասն և ութ Հայրապետք:
Հ. Վասն էր ժողովեցան նոքա:
Պ. Վասն դատապարտելոյ զԱրիոս հերետիկոսը:
Հ. Արիոսի հերետիկոսութիւնն ի՞նչ էր:
Պ. Նա ասէր, թէ „Հայր Աստուած մեծ է քան զՈրդի“, և թէ „Որդին արարած է“:

Հ. Զ Հանգանակը ո՞վ բերաւ 'ի Հայաստան:
Պ. Երիսատակէս Հայրապետն, որ Գրիգորի Լուսաւորչի կրտսեր (Ֆոֆը) որդին էր:
Հ. „Իսկ մեք փառաւորեսցուքը“ ո՞վ ասաց:
Պ. Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ:
Հ. Քանի՞ գլխաւոր Հաւատալիք կան այդ Հանգանակի մէջ:
Պ. Ինն՝
ա. Գոյութիւն և Միութիւն Աստուծոյ:
բ. Երրորդութիւն Աստուածային անձանց:
գ. Երարչագործութիւն Աստուծոյ և Նախախնամութիւն:
դ. Մարմնառութիւն Աստուածորդւոյն:
ե. Միւսանգամ գալուստ նորա:
զ. Իջումն Հոգւոյն Սրբոյ 'ի Յորդանան:
է. Եկեղեցի Քրիստոսի, և Խորհուրդք նորա:
ը. Յարութիւն մեռելոց:
թ. Վերջին դատաստան:

Ա. ԳՈՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Հ. „Գոյութիւն և Միութիւն Աստուծոյ“ ասելով՝ զի՞նչ իմանաս։

Պ. Իմանամ՝ թէ Աստուած կայ և մի է։

Հ. Աստուած ո՞վ է և ի՞նչ է։

Պ. Երկնի և երկրի ստեղծողն և կառավարողն է, բայց զնորա զինչութիւնը ոչ մարդ կարող է իմանալ, և ոչ հրեշտակ։

Հ. Աստուած ո՞ւր է։

Պ. Հոգեւորութեամբ յամենայն տեղիս է, բայց էութեամբ անպարագրելի է։

Հ. Ուստի՞ գիտես՝ թէ Աստուած կայ։

Պ. Արարածոց վերայ նայելով, և զԱստուածաշունչ գիրքը կարդալով։

Հ. Հինչ նշանակէ Արարած բառդ։

Պ. Սարեղծո՞ւած, այսինքն՝ յայլմէ (յո՞-ւէնէ) եղած։

Հ. Ո՞ր բանն ասի արարած։

Պ. Բաց յԱստուծոյ՝ ամենայն ինչ արարած է։

Հ. Ո՞րն է Աստուածաշունչ գիրքն։

Պ. Հին և նոր Կտակարանն է։

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Աստո՞ւածաշունչ։

Պ. Ա՛յն պատճառաւ՝ որ Աստուծոյ շնչով (այսինքն՝ ազդեցո՞ւթեամբ) գրուեցաւ և ոչ մարդկային ուսմամբ։

Հ. Ո՞յք գրեցին զԿտակարանքը։

Պ. Հինգ Կտակարանը գրեցին Մարգարէք, և զնորը՝ Առաքեալք։

Հ. Աստուծոյ անունն ի՞նչ է։

Պ. Ես Է՝ Ես, որ Եբրայեցւոց լեզուաւ ասի Եհովայ կամ Եհովահ։

Հ. Ուստի՞ գիտես զայդ։

Պ. Աստուած ինքն յայտնեց Մովսէս մարգարէին՝ ասելով „Ես եմ Աստուած Ես Է՝ Ես*“։

Հ. Հի՞նչ նշանակէ այդ անունդ։

Պ. Նշանակէ. „Ես եմ ինքնագոյ, անփոփոխ, անսկիզբն և անվախճան“։

Հ. Կա՞ն և այլ անուանք Աստուծոյ։

Պ. Կա՛ն, որպիսի են՝ Տէր, Տէր Տերանց, Տէր Ամենակալ, Արարիչ, Ստեղծող, և ն։

Եբ. գ. 14։

Բ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՆՁԱՆՑ

Հ. Աստուածային անձինքն քանի՞ են։

Պ. Երիք։

Հ. Սա զնոցա անուանքը։

Պ. Հայր. Որդի. Հոգի Սուրբ։

Հ. Աստուածային անձինք զանազանի՞ն 'ի միմեանց։

Պ. Այո՛, զանազանին անձնաւորութեամբ։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Այլ է Հօր անձն, այլ է Որդւոյ անձն, և այլ է Հոգւոյն Սրբոյ անձն։

Հ. Բնութեամբ ևս զանազանի՞ն։

Պ. Ոչ. զի են համաբուն, համազոյ, համակամ, համազօր, և համափառ։

Գ. ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Հ. „Արարչագործութիւն“ ասելով՝ զի՞նչ իմանաս։

Պ. Իմանամ՝ թէ Աստուած յոչնչէ ստեղծեց զերկինքը և զերկիրը, և ինչ որ կայ նոցա մէջ։

Հ. „Նախախնամութիւն“ ասելով՝ զի՞նչ իմանաս։

Պ. Իմանամ՝ թէ Աստուած զեւր ամենայն ստեղծուածքը իւր խնամովքն պահպանեալ է և պահպանէ։

Դ. ՄԱՐՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՐԴՒՈՅՆ

Հ. Աստուածային անձանց որն մարմին առաւ և մարդացաւ։

Պ. Երկրորդ անձն, այսինքն Որդին. ուստի է նա ճշմարտապէս՝ Աստուած կատարեալ, և մարդ կատարեալ։

Հ. Յումմի՞ առաւ նա մարմին։

Պ. Ի սուրբ Կուսէն Մարիամայ։

Հ. Որդին Աստուծոյ յեռ մարդանալոյն զի՞նչ կոչեցաւ։

Պ. Կոչեցաւ Յիսուս, Քրիստոս, Մեսիայ, Էմմանուէլ։

Հ. Յառաջ քան զմարդանալն զի՞նչ կոչէր։

Պ. Կոչէր Բան, Միածին, Որդի։

Հ. Օ՞ր ինչ նշանակէ Յիսուս, և որ լեզուի բառ է։

Պ. Նշանակէ Փրկիչ, և Եբրայեցւոց լեզուի բառ է։

Հ. Ի՞նչ պատճառաւ այդպէս կոչի։

Պ. Այն պատճառաւ՝ որ Նա զմարդկային ազգը փրկեց 'ի դժոխոց և 'ի ձեռաց սատանայի։

Հ. Ինչով փրկեց։

Պ. Իւր չարչարանօք և մահուամբ։

Հ. Քրիստոս և Մեսիայ՝ որ լեզուաց բառք են, և զի՞նչ նշանակեն։

Պ. Քրիստոս՝ Յունարէն է, և Մեսիայ՝ Եբրայեցերէն. երկուքն ևս նշանակեն Օծեալ։

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Օծեալ։

Պ. Այն պատճառաւ՝ որ Նա օծեալ էր 'ի Հոգւոյն Սրբոյ, որպէս ինքն ասաց. „Հոգի Տեառն 'ի վերայ իմ. վասն որոյ և օծ իսկ զիս*“։

Հ. Ուրիշն ի՞նչ եղև Նա այնու օծմամբ։

Պ. Եղև Քահանայապետ, Թագաւոր յաւիտենական, և Մարգարէ 'ի վեր քան զամենայն մարգարէս։

* Գրք. դ. 18։

Հ. Ո՞ր լեզուի բառ է Էմմանուէլ, և զի՞նչ թարգմանի։

Պ. Եբրայեցւոց լեզուի բառ է, և թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած։

Հ. Ի՞նչ ինչ արար Որդին Աստուծոյ յեան ծնանելոյն մարմնով 'ի Կուսէն։

Պ. Կատարեց զայն ամենայն խորհուրդքը կամ գործքերը մարդեղութեան, որք գուշակուած էին 'ի մարգարէից։

Հ. Ո՞յք են գլխաւորքն այն խորհրդոց կամ գործոց։

Պ. Են՝ Մկրտութիւնն, Քարոզութիւնքն, Հրաշագործութիւնքն, Չարչարանքն, Մահն, Թաղումն, Յարութիւնն, Համբարձումն և նստելն ընդ աջմէ Հօր։

Հ. Զի՞նչ կոչին այդոքիկ յատկապէս։

Պ. Կոչին Տնօրէնութիւնք կամ Տնօրինականք Քրիստոսի։

Եվ Մեծագոյն Գաղտնիս Քրիստոսի

Հ. Կրկին անգամ գալոց է Քրիստոս յաշխարհս։

Պ. Այո՛, գալոց է իւր Աստուածային զօրութեամբ և փառօք։

Հ. Վասն էր գալոց է։

Պ. Վասն դատելոյ թէ զկենդանի մարդիկը և թէ զմեռեալքը։

Հ. Երբ պիտի լինի այդ։

Պ. Միզ անդիտելի է. վասն զի Քրիստոս չկամեցաւ յայտնել։

Զ. ԻՋՈՒՄՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ Ի ՅՈՐԴԱՆԱՆ

Հ. Հոգին Սուրբ երբ իջաւ 'ի Յորդանան։

Պ. Երբ որ Քրիստոս մկրտուեցաւ անդ 'ի Յովհաննէս Մկրտչէն։

Հ. Ի՞նչպէս իջաւ։

Պ. Աղաւնակերպ երևմամբ։

Հ. Ինչո՞ւ համար։

Պ. Զ'Քրիստոսի Աստուածութիւնը յայտնելոյ համար, և վկայելոյ՝ թէ 'Նա' է Ճշմարիտ Որդի Աստուծոյ։

Է. ԵԿԵՂԵՑԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴՔ ՆՈՐԱ

Հ. Եկեղեցի որ լեզուի բառ է, և զի՞նչ նշանակէ։

Պ. Յունական բառ է, և նշանակէ ժողով կամ ժողովարան։

Հ. Քրիստոսի ժողովուրդն որն է։

Պ. Ամենայն Ճշմարիտ քրիստոնեայք։

Հ. Եկեղեցին Քրիստոսի քանի՞նշան կամ յատկութիւն ունի։

Պ. Չորս, այսինքն՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն, և Առաքելականութիւն։

Հ. Եկեղեցին ի՞նչ պատճառաւ կոչի Մի։

Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քրիստոնեայք միով հաւատով զմի Քրիստոս՝ զմի Աստուած պաշտեն։

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Սո՞ւրբ։

Պ. Այն պատճառաւ՝ որ ամենայն քրիստոնեայք մկրտութեամբ սրբեալ են 'ի մեղաց, և Քրիստոնէական հաւատքն սրբութիւն քարոզէ։

Հ. Եկեղեցւոյն Քրիստոսի Ընդհանրական կոչուելոյ պատճառն ի՞նչ է։

Պ. Այն է՝ որ Քրիստոնէութիւնն շատ ազգաց մէջ տարածեալ է, և մինչև 'ի կատարած աշխարհի մեալոց է։

Հ. Առաքելական կոչուելոյ պատճառն ի՞նչ է։

Պ. Այն է՝ որ Քրիստոնէական հաւատքն

'ի ձեռն Առաքելոց քարոզեցաւ, և Առաքելական բանից վերայ հաստատեալ է։

Հ. Եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի։

Պ. Երեթն՝

ա. Մկրտութիւն։

բ. Դրոշմ։

գ. Ապաշխարութիւն։

դ. Հաղորդութիւն։

ե. Մոմնոութիւն։

զ. Կարգ կամ Քահանայութիւն։

է. Օծումն հիւանդաց։

Հ. Այդ խորհրդոց քանիքն անկրկնելի են։

Պ. Երեքն, որք են՝ Մկրտութիւն, Դրոշմ, Կարգ։

Հ. Մկրտո-ՆԻ-Ն բառի նշանակութիւնն ի՞նչ է։

Պ. Լո-ացո-Ն։

Հ. Որպէ՞ս օրինակաւ կատարի Մկրտութիւնն։

Պ. Երեք անգամ 'ի ջուրն ընկղմելով զերեսխայն յանուն ամենասուրբ Երրորդութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Հ. Ինչի՞ է նշանակ երեք անգամ ընկղմումն։

Պ. Երիսասոսի երեքօրեայ թաղման։

Հ. Ի՞նչ օգուտ ունի այդ խորհուրդ։

Պ. Սրբէ զերեսխայն յայն մեղաց՝ որոյ մէջ ծնուած է նա, այսինքն՝ 'ի Ակզբնական մեղաց։

Հ. Դրոշմ զի՞նչ նշանակէ։

Պ. Նշան կամ Գնէ։

Հ. Որպէս կատարէ քահանայն զայդ խորհուրդ։

Պ. Օծանելով մեռոնով զՄկրտուածի ճակատը, ևս և զզգայարանքը, այսինքն՝ զաչքը, զականջքը, զհոտոտելիքը, ևն։

Հ. Դրոշմի օգուտն ի՞նչ է։

Պ. Զօրացուցանէ զընդունողը զԵրիստոնէական հաւատը պահելու, և Երիսասոսի անուանակից առնէ։

Հ. Հաղորդո-ՆԻ-Ն բառն զի՞նչ նշանակէ։

Պ. Հաղորդութիւն, այսինքն՝ յետ մեղանչելոյն լալ՝ ցաւիլ՝ սգալ 'ի վերայ գործեալ մեղաց։

Հ. Երբ կատարեալ համարի Սպասիսարութիւնն:

Պ. Երբ որ կատարուի Օրհնմամբ սրտի, խոստովանութեամբ, և վճարմամբ Սպասիսարանաց:

Հ. Ինչով վճարի Սպասիսարանքն:

Պ. Աղօթիւք, Պահօք, և Ողորմութեամբ:

—

Հ. Քաղքրդոնի բառի նշանակութիւնն ի՞նչ է:

Պ. Կորդոնի կամ Մառնակոնի:

Հ. Ի՞նչ պատճառաւ այդպէս կոչի:

Պ. Այն պատճառաւ՝ որ եթէ արժանապէս ճաշակէ քրիստոնեայն զՔրիստոսի մարմինը և արիւնը՝ ընդ տեսակաւ հացի և գինւոյ, հաղորդի՝ այսինքն՝ միանայ ընդ նմա հոգւով:

—

Հ. Ամոնոնի խորհուրդն ո՞րն է:

Պ. Պսակն է, որով հարսն ու փեսայն անբաժանելի կապակցին և կենակից լինին միմեանց՝ յօրինակ անբաժան միաւորութեան Քրիստոսի ընդ սուրբ Եկեղեցւոյ:

Հ. Կարգն ի՞նչ է:

Պ. Է՝ հոգեւոր և սուրբ պաշտօն Աստուածային, որ Զեռնադրոնի-ն ելս կոչի:

Հ. Ի՞նչ պատճառաւ կոչի Զեռնադրոնի-ն:

Պ. Այն պատճառաւ՝ որ եպիսկոպոսն զձեռքը ընծայուածի գլխին դնելով և աղօթելով՝ տայ նմա հոգեւոր իշխանութիւն, և կարգէ զնա ի պաշտօն Եկեղեցւոյ:

Հ. Քանի՞ աստիճան ունի Կարգն:

Պ. Եօթն, որք են՝

ա. Դռնապանութիւն:

բ. Դպրութիւն:

գ. Երգմենեցուցչութիւն:

դ. Ջահրնկալութիւն:

ե. Կիսասարկաւագութիւն:

զ. Սարկաւագութիւն:

է. Քահանայութիւն:

Հ. Եպիսկոպոսութիւնն ի՞նչ է:

Պ. Է՝ գլխաւոր քահանայութիւն. ուստի կոչի և Քահանայապետ-ն:

Հ. Կաթողիկոսութիւնն ի՞նչ է:

Պ. Է՝ գլխաւոր եպիսկոպոսութիւն՝ հան-

դերձ ընդհանրական և ծայրագոյն իշխանութեամբ 'ի վերայ ողջոյն ազգի ուստի-կոչի և Եպիսկոպոսապետո-ին։

—

Հ. Հիւանդաց Օծումն ՞ի՞ն է։

Պ. Այն օծումն է՝ որ հիւանդաց համար սահմանեալ է։

Հ. Ինչ՞ով կատարի։

Պ. Աղօթիւք, և օծմամբ օրհնեալ իւղոյ։

Հ. Առանց օծման իւղոյ չէ՞ կարելի զայդ խորհուրդդ կատարել։

Պ. Կարելի է, որպէս կատարէ Հայոց Եկեղեցին՝ միայն քահանայից աղօթիւք։

Ը. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ

Հ. „Յարութիւն մեռելոց“ ասելով՝ զի՞նչ պարտ է իմանալ։

Պ. Պարտ է իմանալ՝ թէ մեռեալ մարդոց մարմինքն 'ի վերջին դատաստանի օրն՝ իւրեանց հոգւոց հետ միաւորուելով՝ պիտի յառնեն (այսինքն՝ կենդանանան) Աստուծոյ հրամանաւ։

—

Թ. ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆ

Հ. Վերջին դատաստանը ո՞վ պիտի առնէ։

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Յետ բաժանելոյ զարդարքը 'ի մեղաւորաց, ամենայն մարդոց վարձ կամ պատիժ պիտի տայ՝ ըստ իւրեանց գործոց։

Հ. Ո՞ր պիտի լինին արդարքն, և ո՞ր մեղաւորքն։

Պ. Արդարքն պիտի լինին յերկնից արքայութեան, և մեղաւորքն 'ի դժոխս։

Հ. Արքայութիւնն ի՞նչ է։

Պ. Այնպիսի երանութիւն վիճակ կամ կեանք մի է, զոր ո՛չ աչք է տեսած, ո՛չ ականջ է լսած, և ո՛չ լեզու կարէ պատմել։

Հ. Դժոխքն ի՞նչ է։

Պ. Այնպիսի չարաչար վիճակ մի է, որ լի է ամենատեսակ տանջանօք և թշուառութեամբք։

———

ԳԼ. Բ

ՅՈՅՍ

Հ. Զի՞նչ ինչ պարտիմք յուսալ յԱստուծոյ:

Պ. Պարտիմք յուսալ վայելելոյ զայն ամենայն բարիքը՝ զորս խոստացեալ է Աստուած իւր սիրելեացն:

Հ. Որպիսի բարիք խոստացեալ է:

Պ. Խոստացեալ է կեանք, հանգիստ, և երանութիւն անվախճան:

ԳԼ. Գ

ՍԷՐ

Հ. Աստուծոյ սէրն զի՞նչ պահանջէ 'ի մարդոյ:

Պ. Պահանջէ զնորա օրէնքը կամ պատուիրանքը պահել:

Հ. Զի՞նչ հրամայեն Աստուածային Օրէնքն:

Պ. Ի չար գործոյ հեռանալ, և գործել զբարի:

Հ. Օրէնքն քանի՞ տեսակ է:

Պ. Երկու տեսակ է, Բնական և Գրական:

Հ. Բնական Օրէնքն որն է:

Պ. Մարդոյ խղճմտանքն է, որ 'ի բնէ՝ այսինքն 'ի ծննդենէ՝ տպաւորեալ է ամենայն մարդոյ սրտի մէջ:

Հ. Այլ ի՞նչ Օրէնքներ ծնան 'ի Բնական Օրինաց:

Պ. Ամենայն Քաղաքական և Պատատատանական Օրէնքներ, որք հաստատեցան և հաստատին յօրինաւոր Թագաւորաց և Իշխանաց:

Հ. Պարտակա՞ն եմք հնազանդիլ և այնպիսի Օրինաց:

Պ. Այո՛, պարտիմք հնազանդիլ իբրև Աստուծոյ հրամանի, որպէս զրուցեն զբլխաւոր Առաքեալքն Պետրոս և Պաւղոս*:

---

* „Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ. եթէ թագաւորի իբրև առաւել ոմանք, եթէ

Հ. Դրական Օրէնքն որն է։

Պ. Այն է որ յետ Բնական օրինաց գրուեցաւ, և բաժանի 'ի Հին և 'ի Նոր։

Հ. Հին Օրէնքն որն է։

Պ. Այն է՝ զոր Աստուած Մովսէս մարգարէի ձեռամբ տուաւ։

Հ. Ո՞ր տեղ և ե՞րբ։

Պ. Ի Սինա լերին, յիսնակրորդ օրումն՝ յետ ելանելոյ Իսրայէլացւոց յԵգիպտոսէ։

Հ. Քանի՞ տեսակ էր Հին Օրէնքն։

Պ. Երեք տեսակ էր, այսինքն՝ Բարոյական, Ծիսական, և Դատաստանական։

Հ. Բրիստոս հաստատեց վերսին զայդ Օրէնքները։

Պ. Հաստատեց միայն զԲարոյական Օրէնքը. ուստի և ամենայն քրիստոնեայք պարտական են պահելու զայն։

—

գատաւորաց՝ իբրև 'ի նմանէ առաքելոց" (ա Պետր. Բ. 13. 14)։

„Որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ" (Հռոմ. ԺԳ. 2)։

Հ. Ո՞յք են Բարոյական Օրէնքն։

Պ. Աստուծոյ տասն Պատուիրանքն են, որք գրուած էին յերկու քարեղէն տախտակաց վերայ։

Հ. Ասա զտասն Պատուիրանքը։

Պ. ա. „Մի եղիցին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն։

բ. Մի արասցես կուռս։

գ. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո 'ի վիրայ սնոտեաց։

դ. Յիշեա՛ սրբել զօր Շաբաթու։

Ե. Պատուեա՛ զհայր քո և զմայր։

զ. Մի սպանանե՛ր։

Է. Մի՛ շնար։

Ը. Մի՛ գողանար։

Թ. Մի՛ սուտ վկայեր։

Ժ. Մի՛ ցանկանար տան ընկերի քոյ, և ն։

Հ. Զի՞նչ հրամայէ Աստուած „Մի եղիցին քեզ այլ աստուածք՝ բաց յինէն" ասելով։

Պ. Հրամայէ՝ որ բաց 'ի միոյն Աստուծոյ՝ այլ Աստուած չճանաչեմք։

—

Հ. „Մի արասցես կուռս“ ասելով՝ զի՞նչ հրամայէ Աստուած։

Պ. Հրամայէ՝ որ կուռք (այսինքն՝ 'ի քարէ՝ 'ի փայտէ կամ յայլ նիւթոց շինուած պատկեր) չպաշտեմք։

—

Հ. „Մի առնուցուս զանուն Աստուծոյ քո 'ի վերայ սնոտեաց“ ասելով՝ զի՞նչ հրամայէ։

Պ. Հրամայէ՝ ոչինչ բաներու համար Աստուծոյ անուամբ չերդուիլ։

—

Հ. Շաբաթն ո՞ր լեզուի բառ է, և զի՞նչ նշանակէ։

Պ. Եբրայեցւոց լեզուի բառ է, և նշանակէ Հանգիստ։

Հ. Ո՞րն է քրիստոնէից Հանգստեան օրն։

Պ. Կիւրակէն, որ աշխարհի ստեղծման առաջին օրն է, վասն որոյ կոչի նաև Մէկշաբաթ։

Հ. Ո՞յք սահմանեցին՝ Շաբաթի տեղ Կիւրակէն պահել։

Պ. Առաքեալքն սահմանեցին զկնի Յիսուսի հարութեանն։

Հ. Ինչու համար։

Պ. Այնոր համար՝ որ յայն օրուն յարեաւ Յիսուս, և յայն օրուն իջաւ Հոգին Սուրբ յԱռաքելոց վերայ 'ի վերնատան։

Հ. Հայոց բառ է Կէ-ուկէ։

Պ. Ոչ. այլ՝ Յունաց բառ է. Հայերէն թարգմանի Տէրունական։

Հ. Ինչպէս պարտ է սուրբ պահել զԿիւրակէն։

Պ. Ի ծառայական գործոց ազատ մնալով, և հոգեշահ գործոց պարապելով։

Հ. Ծառայական գործքն ո՞յք են։

Պ. Այն աշխատութիւնքն են՝ որք մարմնաւոր շահուց համար լինին։

Հ. Հոգեշահ գործքն ո՞յք են։

Պ. Այսոքիկ են. յեկեղեցի գնալ, աղօթել, քարոզ լսել 'ի քահանայից կամ յԱռաջնորդաց, Աւետարան կամ այլ հոգևոր գրեանք կարդալ, և այլն։

—

Հ. „Պատուեսա զՀայր քո և զմայր“ ասելով՝ զի՞նչ հրամայէ Աստուած։

Պ. Հրամայէ՝ պատուել սիրով և հնազանդութեամբ ոչ միայն զմեր մարմնաւոր ծնողքը, այլ և զհոգեւոր ծնողքը, որք են՝ հոգեւոր Հովիւք, Վարժապետք, և այլ երախտագործ անձինք։

—

Հ. Աստուած զի՞նչ հրամայէ „Մի սպանաներ, Մի շնար, Մի գողանար, Մի սուտ վկայեր“ ասելով։

Պ. Հրամայէ՝ որ պատճառ չլինիմք մեր կամօք՝ ոչ մեր և ոչ այլոց մահուան. շնութիւն և գողութիւն չառնեմք, և սուտ բանի վկայ չլինիմք։

—

Հ. „Մի ցանկանար տան ընկերի քո“ ասելով՝ զի՞նչ հրամայէ Աստուած։

Պ. Հրամայէ՝ որ մեր ընկերաց ստացուածքը չյափշտակեմք։

Հ. Նոր Օրէնքն որն է։

Պ. Ի Դրիստոսէ աւանդեալ՝ և յԱռաքելոց քարոզեալ և գրեալ բանքն են։

Հ. Զի՞նչ ինչ հրամայեն Նոր Օրէնքն։

Պ. Հրամայեն՝ յոր և իցէ մեղաց կամ 'ի մոլութեանց զգուշանալ, և առաքինութիւն գործել։

Հ. Մեղքն քանի՞ տեսակ է։

Պ. Երկու. Սկզբնական և Ներգործական։

Հ. Որն է Սկզբնական մեղքն։

Պ. Ադամային մեղքն է, որ է անհնազանդութիւն պատուիրանացն Աստուծոյ։

Հ. Ներգործականն որն է։

Պ. Այն է՝ զոր մեք մեղէն գործեմք յետ մկրտութեան։

Հ. Ի քանիս բաժանի։

Պ. Յերկուս, այսինքն՝ 'ի Մահուչափ և 'ի Ներելի։

Հ. Ո՞յք են Մահուչափքն և ո՞յք Ներելիքն։

Պ. Մահո-չափ կոչին ծանր ծանր մեղքերն, և Ներելի՝ փոքր և թեթեւ մեղքերն։

Հ. Գլխաւոր մոլութիւնքն քանի՞ են։

Պ. Եօթն. Հպարտութիւն, Նախանձ, Բար-

կութիւն, Ծուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն, Ուղջախոհութիւն։

Հ. Ո՞րք են՝ այդ մոլութեանց հակառակ՝ առաքինութիւնքն։

Պ. Այսոքիկ. Խոնարհութիւն, Եղբայրսիրութիւն, Հեզութիւն, Արիութիւն, Ողորմածութիւն, Բարեխառնութիւն, Ողջախոհութիւն։

Հ. Ինչով կարելի է մեզ ազատ մնալ 'ի մեղաց կամ 'ի մոլութեանց։

Պ. Մեր յօժարակամ ջանիւք, և Աստուծոյ շնորհօքն՝ զոր պարտիմք աղօթիւք խնդրել։

—

Հ. Վանի՞ կերպ է Աղօթքն։

Պ. Երկու. Հրապարակական և Առանձնական։

Հ. Որն է Հրապարակականն։

Պ. Այն է՝ որ եկեղեցւոյ մէջ լինի կարգաւորեալ ժամասացութեամբ։

Հ. Առանձնականն որն է։

Պ. Այն է՝ զոր մեք առանձին կատարեմք։

Հ. Աղօթից գլխաւորն որն է։

Պ. Հայր Մեր է, որ կոչի և Աղօթ Տէրունական, որովհետև Տէրն մեր Քրիստոս աւանդեց զայն։ Եւ է այսպէս.

ա. Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղեցի անուն քո։

բ. Եկեսցէ արքայութիւն քո։

գ. Եղեցին կամք քո՝ որպէս յերկինս, և յերկրի։

դ. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։

Ե. Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողուցուք մերոց պարտապանաց։

զ. Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն։

Է. Այլ փրկեա զմեզ 'ի չարէն։

Զի՝ քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՑ ՏԻՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՍՑ

Մի օր՝ երբ որ աւարտեց Յիսուս զեւր աղօթքը, խնդրեց 'ի նմանէ նորա աշակերտաց մինն իբրեւ 'ի դիմաց ամենայն աշակերտաց, որ մի աղօթք ուսուցանէ նոցա, ինչպէս ուսուցած էր Յովհաննէս Մկրտիչ իւր աշակերտացն: Յայնժամ և Յիսուս Տէրն մեր ուսոյց նոցա զվերոյգրեալ համառօտ աղօթքը:

Այս պատմէ Ս. Աւետարանիչն Ղուկաս (Ղ. ժա. համար 1. 2):

ՀԱՅՆԱՀԱՅՆ

ԱՂՕԹՔՆԵՐ

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Անկանիմք առաջի քո, սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զԿոյսդ՝ բարեխօսեա վասն անձանց մերոց. և աղաչեա զմիածին Որդիդ՝ փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

ԱՂՕԹՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ

Ամենակալ Աստուած՝ որ ծագեցեր զլոյս առաւօտու յարարածս քո, ծագեա և այժմ զառատ ողորմութիւն 'ի վերայ փառաբանչաց անուան քո սրբոյ:

Լուսաւոր քո, Քրիստոս, ամենեքեան լուսաւորեցաք, և 'ի սուրբ խաչ քո, Փրկիչ, հաւատացեալքս ապաւինեցաք: Լուր մեզ, Աստուած Փրկիչ մեր. տուր մեզ զխաղա-

զութիւն քո, և արա առ մեզ զողորմութիւն քո, մարդասէր Տէր։

ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ 'ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի։ Ընդ սուրբ երկիւղ քո բևեռեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր։ Որպէս զի յամենայն ժամ քև պահպանեալ լեցուք յորոգայթից թշնամւոյն, և քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ։ այժմ և միշտ և յաւիտեանս։

ԱՂՕԹՔ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶՃԱՇԿԵՐՈՅԹ

Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան, Աստուած մեր և Տէր, և դու տաս կերակուր նոցա 'ի ժամու։ Աղաչեմք զքեզ՝ պարգևեա և մեզ կերակուր ուրախութեան, և լցո զսիրտս մեր 'ի լիութենէ արարածոց քոց։

ԱՂՕԹՔ ՅԵՏ ՃԱՇԿԵՐՈՒԹԻ

Կերակրիչ և ուրախարար Տէր, փառք քեզ։ լցուցանող Քրիստոս, գոհանամք

զքէն, որ կերակրեցեր զմեզ քաղցրութեամբ կամօք քովք։ Լցո ուրախութեամբ և բերկրութեամբ զսիրտս մեր։

ԱՂՕԹՔ ՅԵՏ ՄՏԱՆԵԼՈՅ ՅԵԿԵՂԵՑԻ

Ի մէջ տաճարիս և առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ խորանացս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմ։ զսուրբ և գՀրաշալի և զյաղթող սէրութիւնդ քո օրհնեմ և փառաւորեմ։ և քեզ մատուցանեմ զօրհնութիւն և զփառս ընդ Հօր և Սուրբ Հոգւոյն, այժմ և միշտ և յաւիտեանս։

ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻ

Տէր Աստուած մեր, կեցո զամենաբարեպաշտ թագաւորն և զԿայսրն ամենայն Ռուսաց զԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉՆ։ զորացո զՆա, օգնեա զաւակաց և զորաց Նորա՝ պահելով զամենեսին 'ի խաղաղութեան։

Թագաւոր յուսացաւ 'ի Տէր։ յողորմութենէ Բարձրելոյն նա մի սասանեսցի։ ամէն։

ՍԱՂՄՈՍ Ծ.

Ողորմեա՛ ինձ Աստուա՛ծ՝ ըստ մեծի ողորմութեան քումի, ըստ բազում գթութեան քումի քաւեա՛ զանօրէնութիւնս իմ։

Առաւել լո՛ւա զիս յանօրէնութենէ իմմէ, և ի՛ մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս։

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քո՛ զմիայն մեղայ՝ Տէր, և չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցիս ի՛ բանս քո, և յաղթեսցես ի դատել քումի։

Անօրէնութեամբ յղացա՛, և ի՛ մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դո՛ւ Տէր՝ զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցողեա՛ յիս մշտկաւ՝ և սո՛ւրբ եղէց. լո՛ւա՝ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի՛ արա ինձ՝ Տէր՝ զցնծութիւն և զուրախութիւն. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո ի՛ մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն։

Սիրա՛ սուրբ հաստատեա՛ յիս Աստուա՛ծ, և հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի իմումի։

Մի՛ ընկենուր զիս՝ Տէր՝ յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան, և հոգւով պետութեան քո հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուա՛ծ, Աստուա՛ծ փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քումի։

Տէր՝ եթէ զշնորհս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր՝ պատարագս մատուցանէաք, բայց դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրա սուրբ և զհոգի խոնարհ Աստուա՛ծ ո՛չ արհամարհէ։

Բարի՛ արա՝ Տէր՝ կամաւք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

ՅԱՂՕԹՔ ԻՐԱՐԱՆՁԻՒ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ, Հայր՝ և Որդի՝ և Սուրբ Հոգի, անեղ և անմահ բնութիւն, արարիչ հրեշտակաց և մարդկան և ամենայն եղելոց. ողորմեա՛ քո՛ արարածոցս:

Հաւատով խոստովանիմ և երկիր պագանեմ քեզ՝ անբաժանելի՛ լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն և մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ 'ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութեան. և լուսաւորեա՛ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ 'ի հաճոյս,

և ընդունել 'ի քէն զխնդրուածս իմ. և ողորմեա՛ ինձ բազմամեղիս:

Հայր երկնաւոր՝ Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի 'ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք. և ողորմեա՛ քո արարածոցս՝ և ինձ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար՝ թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց, և համբարձար փառաւք առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա՛ զիս որպէս զաւազակն, յորժամ դաս արքայութեամբ քով. և ողորմեա՛:

Հոգի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա՛ զիս վերստին Աճային հրով քով, որպէս հրեղէն լեզուաւք զառաքեալսն. և ողոր":

Ընեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւովք և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ. և ողորմեա:

Տեսօղ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի դպրութեան կենաց. և ողորմեա:

Ընդունօղ զաղաչեաց, մեղայ քեզ, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողութի շնորհեա մեղաւորիս. զի 'ի ծնընդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քոյ՝ զդայարանօք իմովք, և ամենայն անպամօք մարմնոյս. և ողորմ:

Ամենախնամ Տէր, զիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել յարատ, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զատութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինիլ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ողորմ:

Ո՛ւր կենդանի՝ Քրիստոս, զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զնիզ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում. և ողորմ:

Խմաստութիւն Հօր՝ Յիսուս, տուր ինձ իմաստութիւն, զբարիս խորհիլ և խօսիլ և գործել առաջի քոյ յամենայն ժամ. 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս. և ողորմ:

Կամեցօղ բարեաց՝ Տէր կամարար, մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ, այլ՝ առաջնորդեա ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. և ողորմ:

Երբայ երկնաւոր, տուր ինչ զարքայութի քո՝ զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ առել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և ողորմ:

Խնամօղ արարածոց, պահեա նշանաւ խաչի քոյ զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց, 'ի փորձութեանց դիւաց, և 'ի մարդոց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ. և ողորմ:

Պահապան ամենայնի՝ Քրիստոս, աջ քո հովանի լեցի 'ի վերայ իմ 'ի տուէ և 'ի գիշերի, 'ի նստիլ 'ի տան, 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել, զի մի երբէք սասանեցայց. և ողորմ:

Ստուգած իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ հետէ մինչև յաւիտեան. և ողորմ:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս 'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն. և բևեռեա 'ի հոգի իմ զսոսկալի օր մահուն՝ և զերկիւղ դեհենոյն՝ և զսէր արքայութեն, զի զղջացայց 'ի մեղաց, և գործեցից զարդարութիւն. և ողորմ:

Ողբիւր անմահութեան, աղբերացո 'ի սրբոյ իմմէ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և ողորմ:

Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ

ուղղափառ հաւատով՝ և բարի գործով՝ և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութիւք գալ առ քեզ. և ողորմ:

Խարերար Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութիւք աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն՝ որք են 'ի ներքոյ երկնից. և ողորմ:

Լոյս ճշմարիտ՝ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել ըզլոյս փառաց քոց 'ի կոչման աւուրն, և հանդչել յուսով բարեաց յօթևանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քոյ. և ողորմ:

Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր դատել զկենդանիս և զմեռեալս, մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա զիս 'ի յաւիտենական հրոյն, և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. և ողորմ:

Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց 'ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց, և դարձո

զնոսա 'ի չարեացն՝ զոր ունին վասն իմ, զի ողորմութիւն քում արժանի եղիցին. և ողորմ։

Փառաւորեալ Տէր, ընկալ զաղաչանս ծառայիս քո, և կատարեա 'ի բարի զինդրուածս իմ՝ բարեխօսութիւն սրբուհւոյ Աստուածածնին՝ և Յովհաննու Մկրտչին, և սրբոյն Սահմանողի Նախավկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց, Մարգարէից, Վարդապետաց, Մարտիրոսաց, Հայրապետաց, Ճգնաւորաց, Կուսանաց, Միանձանց, և ամենայն սրբոց քոց՝ երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեդ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Վ Ե Ր Ջ։

5. ՔՐԻՍՏՈՍԱՊԱՏՈՒՄ, այն է՝ համառօտութիւն Աւետարանական պատմութեան հանդերձ ծանօթութիւնքով (Священная Исторія Новаго Завѣта, съ примѣчаніями). Նոյն հեղինակ. գին իւրաքան. 50 կ. արծ.

Իսկ եթէ գնեացի 25 հատ, հատն 40 կոպ.
„ „ „ 50 „ „ 30 „

6. ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ Հայերէն և Ռուսերէն (Армяно-Русская Азбука). Զարմայրոյ Մ. Մսերեանց. Գին իւրաքանչիւրոյ 15 կոպ. արծ.

Իսկ եթէ գնեացի 25 հատ, հատն 10 կոպ.
„ „ „ 50 „ „ 5 „

7. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Սիմէօնէ մինչև ցՅովհաննէս Ը. ամք տեառն 1763—1831. Գրեալ 'ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց Զմիւռնացւոյ։ Մոսկուա, 1876. 306 երես. գինն է 2 ռ.

8. ՄՍԵՐԱՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՍԵՐԵԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ. Հաստատ Ա. ԽՄԲԱԳԻՐ Զաքարեայ Բանէց. Մոսկուա. 1864 ամի, 212 երես։ Սակաւաթիւ։ Գինն է՝ 3 ռուբ. արծ.

Ցանկացողքն ստանալ 'ի վերոյ նշանակեալ գրքերից կարող են իւրեանց գրովք դիմել առ իս (г. Зармайру Мсеріанцъ, въ Москву, близь Меньшиковой башни, домъ Милованова), ուղարկելով միանգամայն և պատկանեալ գումարը, և ես պատրաստ եմ առաջին փոստիւ կատարել նոցա ցանկութիւնը։

Բոլոր գրեանց գինն նշանակուած է հանդերձ առաքմամբ։

Զարմայր Մսերեանց։

Գինն է 25 կոպէկ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0332629